Հացատօնի պատերի կոպիտ շարվածքի տգեղությունը ծածկելու և խորդուբորդությունների վրա փոշու նստելու առաջն առնելու համար զանգեզուրցի գյուղացին պատերը երբեմն սվաղում է դարմանախառն ցեխով և այսպիսով լցնում է փոսացած և ճաքճքած տեղերը։ Լինում են և այնպիսի տնատերեր, որոնք մի ավելով կամ հին շորի կտորով սպիտակացնում են պատերը կավախառն կամ կրախառն սպիտակ հողով։

Հացատօնը՝ քրատակի հետ համեմատած, անտարակույս ունի անվիճելի առողջապահիկ առավելություններ։ Նա ավելի ընդարձակ է, արևի ճառագայթներով ավելի է ողողվում։ Շողերը հնirքավ ներս թափանցելով՝ արևի ընթացքի հետ կիսաշրջան են կատարում խրճիթի մեջ և դիպչում են նրա բոլոր կողերին, բացի հարավայինից։ Օդափոխությունն ավելի ապահովված է, ծխի հեռացումը ավելի է դյուրացրած։ Թեպետ համեմատաբար ավելի շոր է, սակայն հացատօնն էլ բավականին խոնավ է, մանավանդ հողի մեջ նստած պատերի տակ, որտեղ ավելի մութ է, ծուխը երկար ժամանակ կանգ է առնում մեջը մինչև հնirքի նեղ անցքով հեռանալը, պատերը մրով ծածկված և սևացած են լինում, որի պատճառով տունը ստացել է դարադամ՝ սև տուն թուրքերեն անունը։ Կերակուր պատրաստելու և հաց թխելու համար կրակը վառվում է թorէնի մեջ։ Ամեռը բնակարանը ջերմացվում է հնirքի տակ հատակի վրա շինված բաց օջախի օգնությամբ։ Այստեղ անցյալում շատ աննշան չափով կենտրոնում փոսացրած գետնի վրա վառվում էին ահագին գերաններ, որոնք երբեմն ներս էին քարշ տրվում եզների օգնությամբ։ Գերանների գլուխները օջախի վրա իրար էին կպցնում, իսկ հակառակ ծայրերը դեպի դուռն էին ուղղված լինում։ Առանց փայտը մանր կտորների սղոցելու կամ ջարդելու կրակը աշխատում էին անմար պահել։ Գերանների գլուխները երբ որ այրվում էին. գերաններն առաջ էին մղում։ Այսպես էր դեռ չմոռացված անցյալում։ Ավելի մոտիկ ժամանակներում սղոցի գործադրությունն արդեն վերացրել էր ահագին գերանները ներս քաշելու անհրաժեշտությունը, բայց և այնպես սղոցած կամ կացնով ջարդված փայտը վառվում էր բաց օջախի մեջ, իսկ տանեցիք նստոտում էին նրա շուրջը դարսված կամ քառակուսի ձևով գետնի մեջ հաստատված քարերի վրա։ Կերակուրը պատրաստվում էր այդ օջախի վրա, ամանը դրվում էր կամ ուղղակի կրակի վրա, կամ երկու քարերի, երբեմն էլ երկաթե կասկարայի վրա։ Ծուխն այնպիսի խտությամբ էր լցնում ամբողջ ներսը, որ տանեցիք ստիպված էին լինում ելնել դուրս և սպասել ծխի բարձրանալուն. իսկ երբեմն շորեքթաթ մտնելով՝ հետզհետե ամբողջ հասակով կանգնելով՝ ծխի վեր բարձրանալու հետ միասին։

Հացատօնի մուտքը գտնվում է միշտ առջևի պատի մեջ, գերադասորեն՝ ոչ թե մեջտեղ, այլ ավելի անկյունին (աջ) մոտեցած։ Դուռը միշտ լինում է միափեղկ և հաստ տախտակից շինված։ Որպեսզի դուռը բանալիս ցուրտն ու քամին չպրծնեն ներս՝ մուտքի առջև ներսում պատից մինչև առաջին սյունը շինվում է տախտակե միջնորմ մարդու հասակի բարձրությամբ՝ դրբրզի կամ դրբա, որով առանձնացվում է նախասենյակի՝ հաշտի պես մի տարածություն։ Դռան վրա մեխված է սրամիտ և բարդ կազմություն ունեցող փայտե փակը՝ քլանը. ունի պէլանի, պէնէլի,[17] փայտե բանալի։ Փակը բացվում է միայն ներսից։ Դրսից ձեռքը ներս տանելու և բանալին փակի մեջ նստեցնելու

[17] Նկարագրել է Փարսադան Տեր-Մովսիսյանն իր՝ «Հայ գյուղական տունը» աշխատության մեջ (թարգմանություն գերմաներենից), Վիեննա, 1894, էջ 49։